**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**0009, ք. Երևան, Կորյունի 17**

**N - Ն-5133**
**«21» հունիսի 2022թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

***Հարգելի՛ պարոն Սիմոնյան,***

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 166-րդ հոդվածի 3-րդ մասի և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 143-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Վճռաբեկ դատարանի վարչական, հակակոռուպցիոն պալատների դատավորների թափուր տեղերում ընտրելու համար առաջարկվում են Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընտրված անձանց թեկնածությունները.

Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների (*վարչական պալատի 3 թափուր տեղի համար*)

1. Հրաչ Մարտունի Այվազյան
2. Արտակ Հայկազի Ձեյնալյան
3. Լիանա Օնիկի Հակոբյան

1. Արթուր Ռոբերտի Առաքելյան
2. Արա Էդուարդի Բաբայան
3. Արծրուն Մարտունի Միրզոյան

1. Հակոբ Գրիգորի Գրիգորյան
2. Քրիստինե Պատվականի Մկոյան
3. Արթուր Ռոբերտի Պողոսյան

Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների (*հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի 5 թափուր տեղի համար)*

1. Ռուբիկ Հրանտի Մխիթարյան
2. Արսեն Սերժիկի Նիկողոսյան
3. Արթուր Պարգևի Սարգսյան

1. Լուսինե Լևոնի Աբգարյան
2. Կարեն Սամվելի Բատիկյան
3. Սերգեյ Դիմիտրիի Չիչոյան

1. Հովհաննես Ռաֆիկի Ավագյան
2. Կարեն Ալբերտի Բիշարյան
3. Նելլի Նիկողոսի Հարությունյան

1. Լիլիթ Սոսի Գրիգորյան
2. Արտակ Արտաշեսի Կրկյաշարյան
3. Մուշեղ Պապիկի Հարությունյան

Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների (*հակակոռուպցիոն պալատի քաղաքացիական գործերի քննության դատական կազմի 5 թափուր տեղի համար*)

1. Լիզա Ռաֆիկի Գրիգորյանի
2. Կարեն Հովհաննեսի Թումանյան
3. Լիպարիտ Ռոբերտի Մելիքջանյան

1. Արթուր Ռազմիկի Դավթյան
2. Նաիրա Գևորգի Հովսեփյան
3. Աղասի Արշակի Մկոյան

1. Լուսինե Աբոյի Ավագյան
2. Գևորգ Վանիկի Գյոզալյան
3. Վահե Վարուժանի Ռաֆայելյան:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Վճռաբեկ դատարանի վարչական, հակակոռուպցիոն պալատների դատավորների թեկնածուներին Ազգային ժողովում կներկայացնի Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնակատարը:

Կից ներկայացվում են Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 134-րդ հոդվածի 6-րդ մասով, 143-րդ հոդվածի 3-րդ մասով և Ազգային ժողովի աշխատակարգով սահմանված փաստաթղթերի պատճենները.

Առդիր՝ թիվ ԲԴԽ-62-Ո-165 որոշման օրինակը և թվով 10 փաթեթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Գ. ՋՀԱՆԳԻՐՅԱՆ

# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-62-Ո-165
2022թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԴԱՏԱՎՈՐ ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022 թվականի հունիսի 20-ին, դռնփակ նիստում, քննարկելով Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակները կազմելու, հաստատելու և Ազգային ժողովին առաջարկություններ ներկայացնելու վերաբերյալ հարցը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, 133-րդ հոդվածի 10-րդ մասով, ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի փետրվարի 9-ի թիվ ՀՕ-24-Ն օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Բարձրագույն դատական խորհուրդը

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Կազմել և հաստատել Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակները՝ համաձայն հավելվածի:
2. Ազգային ժողովին առաջարկել սույն որոշմամբ հաստատված անձանց թեկնածությունները՝ Վճռաբեկ դատարանի վարչական, հակակոռուպցիոն պալատների դատավորների թափուր պաշտոններում ընտրելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** Գ. ՋՀԱՆԳԻՐՅԱՆ

2022թ. հունիսի 20
ք. Երևան

## ՑՈՒՑԱԿ

### ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԴԱՏԱՎՈՐ ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ
### (ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ)

| N | ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ | ԾՆՆԴՅԱՆ ԹԻՎ, ԾՆՆԴԱՎԱՅՐ | ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ | ՊԱՇՏՈՆ |
|---|---|---|---|---|
| 1. | ԳՐԻԳՈՐՅԱՆ Լիզա Ռաֆիկի | 1973թ., ք. Երևան | Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան | Դատավոր |
| 2. | ԹՈՒՄԱՆՅԱՆ Կարեն Հովհաննեսի | 1976թ., Լոռու մարզ, ք. Վանաձոր | «Թումանյան» փաստաբանական գրասենյակ, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ, «Վանաձորի պետական համալսարան» հիմնադրամ | Տնօրեն<br><br>Իրավաբանական խորհրդատու<br>Դասախոս |
| 3. | ՄԵԼԻՔՋԱՆՅԱՆ Լիպարիտ Ռոբերտի | 1974թ., Տավուշի մարզ, ք. Իջևան | Բարձրագույն դատական խորհուրդ | Անդամ |



# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԱՌԱՋԱԴՐՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 166-րդ հոդվածը և «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 16.12.2016 թվականի որոշման հավելվածի 95-րդ կետը՝ տալիս եմ իմ համաձայնությունը Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության դատական կազմի դատավորի պաշտոնում առաջադրվելու վերաբերյալ:

**ԿԱՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ**

**ԿԱՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՑ**

**ԽՈՐՀՐԴԻ ՀԱՐԳԵԼԻ ԱՆԴԱՄՆԵՐ,**

Հիմք ընդունելով 2022 ապրիլի 18-ին հրապարակված հայտարարությունը՝ Վճռաբեկ դատարանի Վարչական և Հակակոռուպցիոն պալատները համալրելու անհրաժեշտության վերաբերյալ, խնդրում եմ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 132-րդ և 133-րդ հոդվածների կարգով քննարկել իմ թեկնածությունը՝ վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնում ընդգրկելու համար:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**ԿԱՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

**29.04.2022թ.**

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՄՈՒՏՔԻ N Մ-6481
ԱՄՍԱԹԻՎ 29.04.22 թ.



# ՏԵՂԵԿԱՆՔ

| | |
|---|---|
| Ազգանուն, անուն, հայրանուն | Թումանյան Կարեն Հովհաննեսի |
| Ծննդյան տարեթիվը, ծննդավայրը | 01.09.1976թ., ք. Վանաձոր |
| Կրթությունը, ինչ է ավարտել և երբ | Բարձրագույն, Վանաձորի «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի իրավագիտության ֆակուլտետը՝ 2001թ., Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը դիպլոմավորված՝ 2002թ. |
| Մասնագիտական ստաժը | 21 տարի 10 ամիս |
| Աշխատանքի վայրը | «Թումանյան» փաստաբանական գրասենյակ |
| Ընտանեկան դրությունը | Ամուսնացած |
| Քանի երեխա ունի | Երկու երեխա |

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

| | |
|---|---|
| 2002-2003թթ. | «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի հենակետային վարժարանի «Պետության և իրավունքի հիմունքներ» առարկայի ուսուցիչ |
| 2003-2009թթ. | «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի իրավունքի և հասարակագիտության ամբիոն, «Մարդու իրավունքներ» առարկայի դասախոս |
| 2001-2005թթ. | «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպություն, իրավաբանական խմբի համակարգող |
| 2005-2006թթ. | «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի Ամերիկյան իրավաբանների ընկերակցության և ABA CEELI-ի միջոցներով |

| | |
|---|---|
| | հիմնադրված իրավաբանական կլինիկա, տնօրեն |
| 2005-2011թթ. | «Գյումրիի ժուռնալիստների ասպարեզ ակումբ», «Ինֆորմացիայի ազատության կենտրոն», «Առավոտ օրաթերթ», «ԳԱԼԱ» հեռուստաընկերության և այլ կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրեր, իրավաբան- փորձագետ |
| 2002թ.-ից առ այսօր | «Բաց հասարակության ինստիտուտ» օժանդակության հիմնադրամի կողմից ստեղծված «Արդարադատության խումբ», փորձագետ |
| 2005թ.-ից առ այսօր | Փաստաբանների պալատի անդամ, փաստաբան |
| 2006թ.-ից առ այսօր | «Թումանյան» փաստաբանական գրասենյակ, տնօրեն |
| 2016թ.-ից առ այսօր | «Ազատ Եվրոպա/Ազատություն» ռադիոկայանի Երևանյան բյուրո, իրավախորհրդատու |
| 2020թ.-ից առ այսօր | «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ, իրավաբանական խորհրդատու |
| 2021թ.-ից առ այսօր | «Վանաձորի պետական համալսարան» հիմնադրամ, դասախոս |

«20» հունիսի 2022թ.

N



[illegible]

(անուն, հայրանուն, ազգանուն)

Ներկայացված փաստաթղթեր.

- ☑ հայտ Բարձրագույն դատական խորհրդի անունով
- ☑ անձը հաստատող փաստաթղթի, նույնականացման քարտի պատճեններ
- ☑ հինգ գունավոր լուսանկար 3x4սմ չափսի
- ☑ կենսագրական տվյալներ պարունակող քարտ
- ☑ նոտարական կարգով հաստատված բանավոր հայտարարություն իր դատվածության և սնանկության կամ դրանց բացակայության մասին
- ☑ իրավաբանական կրթության՝ պահանջվող որակավորման աստիճանի առկայությունը հավաստող փաստաթուղթ
- ☑ հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ
- ☑ պահանջվող օտար լեզուների՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած համապատասխան մակարդակին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ
- ☑ պահանջվող մասնագիտական աշխատանքի փորձառությունը հավաստող ապացույց, այդ թվում՝ աշխատանքային պարտականությունները հավաստող պաշտոնի անձնագիր կամ այլ փաստաթղթեր

- ☑ արական սեռի հավակնորդի դեպքում՝ պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու հանգամանքը հավաստող կամ այլընտրանքային ծառայություն անցած լինելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելու փաստը հավաստող փաստաթուղթ
- ☑ դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին Կառավարության սահմանած կարգով տրված փաստաթուղթ
- ☑ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած ձևով համաձայնություն՝ իր վերաբերյալ պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից հավակնորդին ներկայացվող պահանջների համապատասխանության ստուգման սահմաններում, անհրաժեշտ անձնական տվյալներ, այդ թվում՝ բժշկական գաղտնիք հանդիսացող և այլ տեղեկություններ ստանալու մասին
- ☐ առավելագույնը երեք երաշխավորագիր-նամակ՝ ըստ հավակնորդի ցանկության
- ☑ օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարման անդորրագիր
- ☑ բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկ
- ☑ գրավոր հայտարարություն հայտում առկա տեղեկությունների և կից ներկայացված փաստաթղթերի հավաստիության մասին
- ☑ տեղեկանք միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու վերաբերյալ
- ☑ տեղեկանք աշխատավայրից՝ վերջին երեք տարվա ընթացքում խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ չունենալու վերաբերյալ՝ անկախ կարգապահական տույժի՝ սահմանված կարգով հանված կամ մարված լինելու մասին:

----------------------------------
(ստորագրություն)

# Կենսագրական տվյալներ պարունակող քարտ

Ես՝ Կարեն Հովհաննեսի Թումանյանս, ծնվել եմ 1976 թվականի սեպտեմբերի 1-ին Վանաձոր քաղաքում:

2001 թվականին ավարտել եմ Վանաձորի Մխիթար Գոշի անվան միջազգային համալսարանի իրավագիտության բաժինը:

2001-2002 թվականներին սովորել եմ Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում:

2001-2005 թվականներին աշխատել եմ որպես «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության իրավաբանական խմբի համակարգող:

2005-2006 թվականներին սովորել եմ Լեհաստանի Մարդու իրավունքների միջազգային բարձրագույն դպրոցում:

2006-2011 թվականներին եղել եմ «Գյումրիի Ժուռնալիստների ասպարեզ ակումբի», «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի», «Առավոտ օրաթերթի», «ԳԱԼԱ» հեռուստաընկերության և այլ կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի իրավաբան-փորձագետ:

2006 թվականից հանդիսանում եմ «Թումանյան» փաստաբանական գրասենյակի հիմնադիր-տնօրենը, 2005 թվականից արտոնագրված փաստաբան եմ:

2016 թվականից «Ազատ Եվրոպա/Ազատություն ռադիոկայան» Երևանյան բյուրոյի, 2020 թվականից՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ Ընկերության իրավախորհրդատուն եմ:

2021 թվականից դասավանդում եմ «Քաղաքացիական դատավարություն» Վանաձորի պետական համալսարանում:

Փաստաբանական գործունեության ընթացքում հիմնականում զբաղվում եմ Մարդու իրավունքների Եվրոպական դատարան գանգատների ներկայացմամբ և գործերի վարմամբ:

Ամուսնացած եմ, ունեմ երկու երեխա:

Կ. Թումանյան________________________ 27 ապրիլի 2022թ.

## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՔԱՐՏ

### Թումանյան Կարենի Հովհաննեսի

| Ուսումնական հաստատության անունը և վայրը | Ֆակուլտետը կամ ստորաբաժանումը | Ընդունվելու տարին | Ավարտելու տարին | Ստացած մասնագիտությունը, նշել դիպլոմի կամ վկայականի համարը |
|---|---|---|---|---|
| «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան, Վանաձոր | իրավաբանական ֆակուլտետ | 1997-2001 | | Իրավաբան, բակալավրիատ Դիպլոմ AB 004711 |
| Մոսկվայի պետական մանկավարժական համալսարան, Մոսկվա | իրավաբանական ֆակուլտետ | 2001-2002 | | դիպլոմավորված մասնագետ, իրավաբան դիպլոմ ИВС 0439341 |
| Մարդու իրավունքների միջազգային բարձրագույն դպրոց, Լեհաստան | | 2005-2006 | | Վկայական 121 |

| լեզուների իմացություն | |
|---|---|
| Հայերեն | տիրապետում եմ ազատ |
| Ռուսերեն | տիրապետում եմ ազատ |
| Անգլերեն | կարդում եմ և կարող եմ բացատրվել |

Աշխատանքային գործունեություն

| Տարեթիվը | Պաշտոնը, կազմակերպությունը | կազմակերպության գտնվելու վայրը |
|---|---|---|
| 2002-2003 | «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի հենակետային վարժարան, Պետության և իրավունքի հիմունքներ առարկայի Ուսուցիչ | Վանաձոր |
| 2003-2009 | «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան, իրավունքի և հասարակագիտության ամբիոն «Մարդու իրավունքներ» առարկայի դասախոս | Վանաձոր |
| 2001-2005 | «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության իրավաբանական խմբի համակարգող | Վանաձոր |
| 2005-2006 | «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի Ամերիկյան իրավաբանների ընկերակցության և ABA CEELI-ի միջոցներով հիմնադրված իրավաբանական կլինիկայի Տնօրեն | Վանաձոր |
| 2005-ից | ՀՀ Փաստաբանների պալատի անդամ, Փաստաբան | Կիրառելի չէ |
| 2006-ից | «Թումանյան» փաստաբանական գրասենյակի տնօրեն | Վանաձոր |
| 2005-2011 | «Գյումրիի Ժուռնալիստների ասպարեզ ակումբի», «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի», «Առավոտ օրաթերթի», «ԳԱԼԱ» հեռուստաընկերության և այլ կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի իրավաբան-փորձագետ | Կիրառելի չէ |
| 2002-ից | «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի» կողմից ստեղծված «Արդարադատության խմբի» փորձագետ | Կիրառելի չէ |
| 2016-ից | «Ազատ Եվրոպա/Ազատություն ռադիոկայան» Երևանյան բյուրոյի իրավախորհրդատու | Երևան |
| 2020-ից | «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ Ընկերության իրավաբանական խորհրդատու | Երևան |
| 2021-ից | «Վանաձորի պետական համալսարան» հիմնադրամում դասախոս | Վանաձոր |

Կ. Թումանյան ____________________ 27 ապրիլի 2022թ.

Էլեկտրոնային ակտի կոդ: 763-20220426-88-5859844
[illegible] ակտի գաղտնագիր: OEBU9E

**ԵՐԴՄԱՆ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, քաղաք Վանաձոր
երկու հազար քսաներկու թվականի ապրիլի քսանվեց

Ես՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի **ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԹՈՒՄԱՆՅԱՆՍ**, ծնված՝ 01/09/1976թ-ին,

Հավաստիացնում եմ, որ իմ կողմից 26.04.2022թ. /երկու հազար քսաներկու թվականի ապրիլի քսանվեցին/ արված, ստորագրված և «Լոռու մարզ» նոտարական տարածքի նոտար՝ Ռոզա Սեյրանի Բեկչյանի կողմից գրանցամատյանի 2160 համարով վավերացված հայտարարությունը ճշմարտացի է:
Սույն երդման հավաստիացմամբ հաստատում եմ, որ տեղյակ եմ կեղծ երդում տալու դեպքում քրեական պատասխանատվության մասին:
Ստորագրություն՝ **ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ** ____________

Մենք՝ վկաներ ես՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի **ԱՇՈՏ ՍԱՄՎԵԼԻ ՄՈՒՐԱԴՅԱՆՍ**, ծնված՝ 17/05/1983թ-ին,

ՎԱՆԱՁՈՐ, ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ [illegible] և ես՝Հայաստանի Հանրապետության քաղաքացի **ՆԵԼԼԻ ԿԱՐԵՆԻ ՄԱՄՅԱՆՍ**, ծնված՝ 13/12/1992թ-ին,

հավաստում ենք, որ հայտարարությունը և երդման հավաստիացումը կատարվել են մեր ներկայությամբ **ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ** կողմից,
1.օժտված ենք լրիվ գործունակությամբ,
2.գրագետ ենք, կարդում ենք ինքնուրույն,
3.տիրապետում ենք հայոց լեզվին,
4.կեղծ ցուցմունք տալու համար դատապարտված չենք եղել, որի համար ստորագրում ենք
վկաներ՝ 1. **ԱՇՈՏ ՍԱՄՎԵԼԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ** ____________

2. **ՆԵԼԼԻ ԿԱՐԵՆԻ ՄԱՄՅԱՆ** ____________

երկու հազար քսաներկու թվականի ապրիլի քսանվեցին: Ես՝ Հայաստանի Հանրապետության «Լոռու մարզ» նոտարական տարածքի նոտար՝ Ռոզա Սեյրանի Բեկչյանս, հաստատում եմ **ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ** կողմից կատարված բանավոր հայտարարությունը, որն արվել և ստորագրվել է իմ ներկայությամբ և հավաստվում է վերջինիս կողմից երկու հազար քսաներկու թվականի ապրիլի քսանվեցին վկաներ՝ **ԱՇՈՏ ՍԱՄՎԵԼԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ և ՆԵԼԼԻ ԿԱՐԵՆԻ ՄԱՄՅԱՆԻ** ներկայությամբ տրված երդման հավաստիացմամբ: Հայտարարությունն արած անձի և վկաների ինքնությունը և գործունակությունը ստուգված են: Համաձայն <<Նոտարիատի մասին>> ՀՀ օրենքի 81.2 հոդվածի՝ նոտարի հաստատած բանավոր հայտարարություններն ապացուցողական ուժ ունեն դատարանում և այլ պետական մարմիններում ներկայացնելիս:
Գրանցված է գրանցամատյանում 2161

Գանձված է պետական տուրք  երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար հինգ հազար ՀՀ դրամ ` համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Ռոզա Մեյրանի Բեկչյան

**Նոտարական ակտի կոդ:** 763-20220426-88-5859778
**Նոտարական ակտի գաղտնագիր:** KYWLV1

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ,քաղաք Վանաձոր,
երկու հազար քսաներկու թվականի ապրիլի քսանվեց

Հայաստանի Հանրապետության քաղաքացի` **ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՑ**, ծնված` 01/09/1976թ-ին, [illegible]

Ես` **ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԹՈՒՄԱՆՅԱՆՍ,** հայտնում եմ, որ "Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրք" սահմանադրական օրենքի 112-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված սահմանափակումներ չունեմ, մասնավորապես. երբեք չեմ դատապարտվել հանցագործության կատարելու համար, մարված կամ հանված դատվածություն չունեմ, այդ թվում չեմ դատապարտվել դիտավորյալ հանցագործության կատարման համար, իմ նկատմամբ հարուցված չէ քրեական հետապնդում և ազատությունից զրկելու հետ կապված պատիժ չեմ կրել: Դատարանի`օրինական ուժի մեջ մտած ուժի մեջ մտած վճռով անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մնանկ չեմ ճանաչվել:
Հայտնում եմ նաև, որ չեմ հանդիսացել և ներկայումս չեմ հանդիսանում որևէ կուսակցության անդամ, որի համար ստորագրում եմ:

**ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ** ____________

երկու հազար քսաներկու թվականի ապրիլի քսանվեցին: Ես` «Լոռու մարզ» նոտարական տարածքի նոտար` ՌՈԶԱ ՍԵՅՐԱՆԻ ԲԵԿՉՅԱՆՍ, վավերացնում եմ **ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ** ստորագրության իսկությունը, որը կատարվել է իմ ներկայությամբ: Փաստաթուղթը ստորագրողի ինքնությունը և գործունակությունը ստուգված են:«Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի համաձայն` հաստատում եմ ֆիզիկական անձի կողմից կատարված ստորագրության իսկությունը, այլ ոչ թե փաստաթղթում շարադրված փաստերը:
Գրանցված է գրանցամատյանի թիվ 2160 ով:

Գանձված է պետական տուրք հինգ հարյուր ՀՀ դրամ և ծառայության վճար մեկ հազար ՀՀ դրամ ` համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Ռոզա Սեյրանի Բեկչյան

НОТАРИУС БЕКЧЯН РОЗА
NOTARY BEKCHYAN
NOTARIAL TERRITORY

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Վանաձորի «Մխիթար Գոշ» հայ-ռուսական
(բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը)
միջազգային համալսարան

# ԴԻՊԼՈՄ

AB № 004711

ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ
հուլիսի «14»-ի ՈՐՈՇՄԱՄԲ
Կարեն Թումանյանին
(անուն, հայրանուն, ազգանուն)
ՇՆՈՐՀՎԱԾ Է
Իրավագիտության
ԲԱԿԱԼԱՎՐԻ
ԱՍՏԻՃԱՆ
«Իրավագիտություն»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ

Պետական քննական հանձնաժողովի նախագահ
Ռեկտոր
Կ.Տ.

25 ապրիլի 2002 թ. ք. Վանաձոր Գրանցման № 30

ԴԻՊԼՈՄԸ ՊԵՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ Է ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

© «ՄԵԳԱՊ ԵՐԵՎԱՆ» տպագրատուն, 2001

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

Ванадзорский Армяно-Российский
(наименование высшего учебного заведения)
Международный университет „Мхитар Гош"

# ДИПЛОМ

АВ № 004711

РЕШЕНИЕМ ГОСУДАРСТВЕННОЙ ЭКЗАМЕНАЦИОННОЙ КОМИССИИ
от «14» июля 2001 года
Туманяну Карену
(фамилия, имя, отчество)
ПРИСУЖДЕНА СТЕПЕНЬ БАКАЛАВРА
Юриспруденции
ПО СПЕЦИАЛЬНОСТИ „Юриспруденция"

*Председатель государственной экзаменационной комиссии*
М.П.
*Ректор*

25 апреля 2002 г. г. Ванадзор Регистрационный № 30

ДИПЛОМ ЯВЛЯЕТСЯ ГОСУДАРСТВЕННЫМ ДОКУМЕНТОМ О ВЫСШЕМ ОБРАЗОВАНИИ

REPUBLIC OF ARMENIA

Vanadzor Mkhitar Gosh Armenian-Russian
(higher educational establishment)
International University

# DIPLOMA

AB № 004711

BY THE RESOLUTION OF THE STATE EXAMINATION COMMISSION OF
14 july 2001
Karen Toumanyan
(first name, last name)
IS AWARDED THE BACHELOR'S DEGREE
of Jurisprudence
IN THE FIELD OF Jurisprudence

*Chairman of the State Examination Commission*
*Rector*

25 april 2002 c. Vanadzor Registration № 30

DIPLOMA IS THE STATE DOCUMENT OF THE HIGHER EDUCATION

ДИПЛОМ ЯВЛЯЕТСЯ
ГОСУДАРСТВЕННЫМ ДОКУМЕНТОМ
О ВЫСШЕМ ОБРАЗОВАНИИ

Регистрационный номер 721 15 июля 2002 года

РОССИЙСКАЯ ФЕДЕРАЦИЯ

г. Москва
Московский педагогический государственный университет

# ДИПЛОМ

ИВС 0439341

Решением
Государственной аттестационной комиссии

от 3 июля 2002 года

Туманяну Карену

ПРИСУЖДЕНА
КВАЛИФИКАЦИЯ

ЮРИСТ
по специальности "юриспруденция"

Председатель Государственной аттестационной комиссии

Ректор

М.П.

...ման ընթացքում ստացած գնահատականները և քննություններ է հանձնել հետևյալ առարկաներից

| Հ/հ | Առարկայի անվանումը | Ժամերի ընդհանուր քանակը | Գնահատականը |
| --- | --- | --- | --- |
| 1. | Փիլիսոփայություն | 72 | 4 (լավ) |
| 2. | Մշակութաբանություն | 54 | 3 (բավարար) |
| 3. | Հայոց պատմություն | 80 | 4 (լավ) |
| 4. | Սոցիոլոգիա | 54 | 4 (լավ) |
| 5. | Քաղաքագիտություն | 54 | 3 (բավարար) |
| 6. | Տնտեսագիտություն | 72 | 3 (բավարար) |
| 7. | Տրամաբանություն | 54 | ստուգված |
| 8. | Ճարտասանություն | 54 | ստուգված |
| 9. | Օտար լեզու /անգլերեն/ | 210 | 3 (բավարար) |
| 10. | Ռուսաց լեզու | 72 | ստուգված |
| 11. | Ֆիզ. դաստիարակություն | 216 | ստուգված |
| 12. | Մաթեմատիկա և ինֆորմատիկա | 64 | ստուգված |
| 13. | Իրավապահ մարմինները ՀՀ-ում | 36 | 3 (բավարար) |
| 14. | Ռուսաստանի պետության և իրավունքի պատմություն | 140 | 3 (բավարար) |
| 15. | Իրավական վիճակագրություն | 54 | ստուգված |
| 16. | Պետության և իրավունքի տեսություն | 140 | 3 (բավարար) |
| 17. | Արտ. երկրների պետության և իրավունքի պատմություն | 140 | 4 (լավ) |
| 18. | Հռոմեական իրավունք | 51 | ստուգված |
| 19. | Սահմանադրական իրավունք | 140 | 3 (բավարար) |
| 20. | Ռուսաստանի պետական իրավունք | 136 | 4 (լավ) |
| 21. | Արտ. երկրների սահմանադրական իրավունք | 80 | 5 (գերազանց) |
| 22. | Քաղաքացիական իրավունք | 207 | 4 (լավ) |
| 23. | Քրեական իրավունք | 207 | 4 (լավ) |
| 24. | Վարչական իրավունք | 72 | 4 (լավ) |
| 25. | Աշխատանքային իրավունք | 140 | 5 (գերազանց) |
| 26. | Ֆինանսական իրավունք | 72 | 4 (լավ) |
| 27. | Քաղաքական և իրավական ուսմունքների պատմություն | 68 | 5 (գերազանց) |
| 28. | Քաղաքացիական դատավարություն | 124 | 4 (լավ) |
| 29. | Քրեական դատավարություն | 142 | 5 (գերազանց) |
| 30. | Էկոլոգիական իրավունք | 68 | ստուգված |
| 31. | Կրիմինալիստիկա | 150 | 5 (գերազանց) |
| 32. | Միջազգային իրավունք | 90 | 5 (գերազանց) |
| 33. | Միջազգային մասնավոր իրավունք | 52 | 4 (լավ) |
| 34. | Իրավաբանական ծառայության կազմակերպում | 72 | 5 (գերազանց) |
| 35. | Ընտանեկան իրավունք | 68 | ստուգված |
| 36. | Կրիմինալոգիա | 72 | ստուգված |
| 37. | Կրթական իրավունք | 34 | ստուգված |
| 38. | Հողային իրավունք | 54 | 3 (բավարար) |
| 39. | Կոնֆլիկտոլոգիա | 54 | ստուգված |
| 40. | Իրավական հոգեբանություն | 32 | ստուգված |
| 41. | Ժամանակակից բնագիտության հայեցակարգ | 54 | ստուգված |

-------------------- Փաստաթղթի վերջը --------------------

Helsinki Foundation for Human Rights, Warsaw, Poland



# CERTIFICATE 121

This certifies, that

## Mr Karen Tumanyan

has attended [illegible] hours of lectures and workshops, passed all necessary exams and defended the [illegible] thereby successfully completing the

## International Advanced Course on Human Rights Protection

[illegible]
Programme Coordinator

Warsaw, May [illegible] 2006

Marek [illegible]
President of the Board

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ»
ՊՈԱԿ

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
«ВАНАДЗОРСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЙ КОЛЛЕДЖ»
ГНКО
MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT OF THE
REPUBLIC OF ARMENIA
«VANADZOR STATE AGRICULTURE
COLLEGE »
SNPO

2009, ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Աբովյան 64, Հեռ./Тел./Tel +374(322) 2 -33-85, 2009, РА Лорийская область, г. Ванадзор, Абовян 64, 2009,Abovyan 64 , Vanadzor City, Lori Region, RA. E-mail: vanagrocol@mail.ru,

N 94 «29» ապրիլի, 2022թ.

# ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է առ այն, որ Կարեն Հովհաննեսի Թումանյանը 26.12.1993թ. հրաման 182 միջնակարգ կրթության հիմքով ընդունվել է ՀՀ գյուղատնտեսության և պարենի նախարարության Խ. Ա. Խաչատրյանի անվան Վանաձորի գյուղատնտեսական տեխնիկումի հեռակա բաժին «Երթևեկության կառավարումը և փոխադրումների կազմակերպումը ավտոմոբիլային տրանսպորտում» մասնագիտությամբ 3-րդ կուրս /հիմք- Գուգարքի գյուղատնտեսական տեխնիկումի սովորողների շարժի հրամանագիրք N21 /:

30.10.1996թ. հրաման 212 Կարեն Հովհաննեսի Թումանյանը ավարտել է հիշյալ մասնագիտության լրիվ դասընթացը հեռակա ուսուցմամբ և ստացել փոխադրումների տեխնիկ-կազմակերպչի որակավորում /հիմք- Վանաձորի Խ.Ա. Խաչատրյանի անվան գյուղատնտեսական տեխնիկումի սովորողների շարժի հրամանագիրք N 23/ :

Դիպլոմ ՊՏ-I N 429231, գրանցման N 7148. տրված 31.10.1996թ./հիմք-դիպլոմների բաշխման գրանցամատյան 3 /:

14.07.1993թ. հրաման 110 նշանակվել է 1993-1994 ուստարվա ընդունելության քննող հանձնաժողով՝ հայոց լեզու առարկայի:

Տեղեկանքը տրվում է ներկայացնելու ըստ պահանջի:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ- 01.03.1970թ. Կիրովականի գյուղատնտեսական տեխնիկումը համարվել է Գուգարքի շրջանի Մեղրուտի սովխոզ-տեխնիկում: ՀՀ Գյուղատնտեսության նախարարության 20.12.1999թ. թիվ 419 հրամանով գյուղտեխնիկումը վերանվանվել է Վանաձորի Խ.Խաչատրյանի անվան գյուղատնտեսական պետական քոլեջ: Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ.օգոստոսի 10-ի N741 որոշմամբ և գյուղատնտեսության նախարարի 23.08.2001թ. N 168 հրամանով Վանաձորի գյուղատնտեսական և գյուղական շինարարական պետական քոլեջները միավորելով վերակազմակերպվում է Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ: Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002թ. հունիսի 20-ի N [illegible] որոշմամբ և գյուղատնտեսության նախարարի 20.08.2002թ. N 230 հրամանով՝ քոլեջը վերակազմավորման ձևով վերակազմակերպվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի: ՀՀ կառավարության 2012թ [illegible] որոշմամբ փոփոխվել է ենթակայությունը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության «Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ ; 03.12.2019թ. N 1164-Ա/2 հրամանով ՀՀ կրթության և գիտության նախարարության «Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ը վերանվանվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ :

Տնօրեն՝ Վարդան Սիմոնյան

Կատ. կադրերի բաժնի տեսուչ՝
Լ.Ասատրյան
077-03-16-27

# ԴԻՊԼՈՄ

ՊՏ-I № 429231

Սույն դիպլոմը տրված է Կարեն Հովհաննեսի Թումանյանին

այն բանի, որ նա 1993 թվականին ընդունվել է ՀՀ Գյուղատնտեսության և [illegible] Խ. Ա. Խաչատրյանի անվան [illegible] գյուղատնտեսական տեխնիկումը

և 1996 թվականին ավարտել է նույն տեխնիկումը

լրիվ դասընթացը «Փոխադրումների կազմակերպում և շարժման կառավարում ավտ. տրանսպ.» մասնագիտությամբ

Պետական որակավորման հանձնաժողովի 1996 թվականի հոկտ. „30“-ի որոշմամբ

Կ. Հ. Թումանյանին

շնորհված է փոխադրումների կազմակերպիչ տեխնիկի որակավորում

Պետական որակավորման հանձնաժողովի նախագահ [signature]

Դիրեկտոր [signature]

Քարտուղար [signature]

Քաղաք Վանաձոր 31 հոկտեմբ. 1996 թվականի

Գրանցման № 7148

# ДИПЛОМ

ПТ-I № 429231

Настоящий диплом выдан Туманяну Карену Оганесовичу

в том, что он в 1993 году поступил в Ванадзорский с/х тех-никума им. Х. А. Хачатряна Мин. с/х Респ. Армении

и в 1996 году окончил полный курс названного техникума

по специальности „Организация перевозок и управление движением на автом. транспорте“

Решением Государственной квалификационной комиссии от 30. октяб. 1996 года

Туманяну К. О.

присвоена квалификация техник-организатор перевозок.

Председатель Государственной квалификационной комиссии [signature]

Директор [signature]

Секретарь [signature]

Город Ванадзор 31 октября 1996 года.

Регистрационный № 7148

Московская типография Гознака. 1989.

DY

since 2017

DoYou English

# ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

**Առ այն, որ**

## ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ

հաջողությամբ անցել է ռուսերեն լեզվի նորմատիվ թեստավորում, այն է՝

**БАЗОВЫЙ УРОВЕНЬ А2 РУССКОГО ЯЗЫКА,**

ապրիլի 25-ին, 2022 թ.:

DOYOU.AM ELC

ԹՈՒՄԱՆՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

N 907/119

27 սեպտեմբերի 2024թ.

# Տեղեկանք

Տեղեկանքը տրվում է այն մասին, որ Կարեն Հովհաննեսի Թումանյանը 2007 թվականից աշխատում է «Թումանյան» փաստաբանական գրասենյակում որպես տնօրեն և զբաղվում է փաստաբանական գործունեությամբ:

Տնօրեն՝ Կ. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

ПАЛАТА АДВОКАТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

CHAMBER OF ADVOCATES
OF THE REPUBLIC OF ARMENIA

Փաստաբանական գործունեության
Արտոնագիր N 649

# ԿԱՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Лицензия N 649
на право адвокатской деятельности

# КАРЕН ТУМАНЯН

License N 649
of advocate's activity

# KAREN TUMANYAN

Տրված է անժամկետ
Выдано бессрочно
Is given for unlimited time

| | |
|---|---|
| Նախագահ | Ռ. ՍԱՀԱԿՅԱՆ |
| Председатель | Р. СААКЯН |
| President | R. SAHAKYAN |

09.11.2006

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

«27» 04 2022թ.
№ 05/05.2/503-22

*Հայաստանի Հանրապետություն,*
*0010, ք.Երևան, Զաքյան 7-2*
*(+374 10) 600 701*

## ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն տեղեկանքը տրվում է առ այն, որ Կարեն Թումանյանը 2006 թվականի նոյեմբերի 9-ից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան (արտոնագիր թիվ 649) և փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը կասեցված կամ դադարեցված չէ:

Կարեն Թումանյանը իր փաստաբանական գործունեության ընթացքում կարգապահական պատասխանատվության չի ենթարկվել:

Սույն տեղեկանքը տրվում է ներկայացնելու ըստ պահանջվող վայրի:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմի ղեկավար՝ Էդգար Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ
ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱԺՆԻ ԲԱԺԻՆ

377200 ՀՀ ք. Վանաձոր, Ռուսթավելի փող. 1 Հեռ. / ֆաքս / 0322/50202

թիվ 56/3- 2611

„27" 04 2022թ

# ՏԵՂԵԿԱՆՔ

Քաղաքացի՝ Կարեն Հովհաննեսի Թումանյանը ծնված 01.09.1976թ. հաշվառված քաղ.
ինֆորմացիոն կենտրոնի հաշվառումներով չի անցնում, դատվածություն չունի, հետախուզման մեջ չի գտնվում:

Պետ
ոստիկանության փոխգնդապետ Մ.Ռ.ՆԱԽՇՔԱՐՅԱՆ

Կատ. Ս.Խուրշուդյան
/0322-5-02-02/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ԵՎ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ,
ՀԱՄԱԼՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

№ 476/22Բ

«26» 04 2022թ.

# ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է Կարեն Հովհաննեսի Թումանյանին, ծնված 01.09.1976թ., առ այն, որ նա համաձայն 1998թ. «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1 կետի գ ենթակետի (պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան դրության բերումով տարկետում տրվում է այն զորակոչիկին, որն ունի 2 և ավելի երեխա) տրվել է տարկետում պարտադիր ժամկետային զինծառայությունից մինչև 27 տարին լրանալը և համաձայն նույն օրենքի 24-րդ հոդվածի 1 կետի (պահեստազորում ընդգրկվում և հաշվառվում են ՀՀ քաղաքացիություն ստացած և 27 տարեկանը լրացած զինապարտները) 29.12.2003թ.-ին հաշվառվել է ՀՀ ԶՈՒ պահեստազորում:

Հիմք՝ հաշվառման քարտ:

Տրվում է ներկայացնելու պահանջվող վայր :

ՀՀ ՊՆ Զ ԵՎ ԶՀ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ
ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ
ՂԵԿԱՎԱՐ Ս.ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՍՊԱ
փոխգնդապետ Վ.ՎԻՐԱԲՅԱՆ

Անդորրագիր N 9 29/04/2022 «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «ԱՐԱԲԿԻՐ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՎՃԱՐՈՂ 99

Թումանյան Կարեն Հովհաննեսի

93342900

Բանկ՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «ԱՐԱԲԿԻՐ» ՄԱՍ

Սոցքարտ N 1109760094

ՍՏԱՑՈՂ՝ Դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման որակավորման քննություն

Բանկ՝ Կենտրոնական Գանձապետարան

| | | | | |
|---|---|---|---|---|
| ԴԵԲԵՏ | | | | Գումար |
| 16305 | 1031017 | 1011 | | 20,000.00 AMD |
| ԿՐԵԴԻՏ | | | | |
| 90000 | 5163671 | | | 200 |
| | | | | 20,200.00 AMD |

Գումարը տառերով Քսան հազար երկու հարյուր դրամ

Վճարման նպատակը՝ 1 Փոխարժեքով

պետ տուրք դատավորի որակավորման ստուգմանը մասնակցելու համար հայտ ներկայացն. նպատակով

Ներկայացվել է՝ 011754538 05/08/2021 01/09/1976

Ստր. 29/04/2022 10:45:

Տպգ. 29/04/2022 10:45:

Հսկիչ Հաշվապահ Գանձապահ

# ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Սույնով Դատական դեպարտամենտին տալիս եմ համաձայնություն իմ վերաբերյա պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից, հավակնորդին ներկայացվո պահանջների համապատասխանության ստուգման սահմաններում, անհրաժեշ անձնական տվյալներ, այդ թվում՝ բժշկական գաղտնիք հանդիսացող և այ տեղեկություններ ստանալու մասին:

Կարեն Թանանյան
_____________________
*անուն, ազգանուն*

_____________________
*ստորագրություն*

«29» ապրիլ 2022թ.

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Կարեն Թանանյան, սույնով հայտարարում եմ, որ Վճռաբեկ դատարանի դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվելու համար իմ կողմից ներկայացված հայտում առկա տեղեկությունները և կից փաստաթղթերը հավաստի են:

Կարեն Թանանյան
_____________________
*անուն, ազգանուն*

_____________________
*ստորագրություն*

«19» 04 2022թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՆԴԻՍԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Կարեն Հովհաննեսի Թումանյանը
/անուն, հայրանուն, ազգանուն/

Անձը հաստատող փաստաթուղթ

բնակչության պետական ռեգիստրի տվյալներով հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի:

Այլ երկրի քաղաքացիության վերաբերյալ ԲՊՌ-ում նշում առկա չէ:

**ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետ, ոստիկանության գնդապետ**
**Ա. Մկրտչյան**

/ստորագրություն/

Կ.Տ

«26» 04 2022թ.

N 8-29974